«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 1 - 2

27 օգոստոսի 2020 թվականի (հեռավար կարգով)

ՀՊՏՀ պրոֆեսորադասախոսական կազմի 2020-2021 ուսումնական տարվա ուսումնական բեռնվածությունը բաշխելու մասին

Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298–Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրության ընթացքում Պարետի կողմից սահմանված սահմանափակումներով, մասնավորապես՝ մարդկային կուտակում ենթադրող միջոցառումների անցկացման արգելքով պայմանավորված ՀՊՏՀ 2020-2021 ուսումնական տարվա թափուր ժամերի մրցույթի անցակցման անհարինությունից ելնելով՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. 2020-2021 ուսումնական տարում թափուր դասաժամերի առկայության դեպքում առաջնորդվել «Հայաստանի պետական տնտեսագիտական համայսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտամանկավարժական կազմի ընտրության և տեղակալման կանոնակարգի 29-րդ կետի դրույթներով և համալսարանի գիտամանկավարժական կազմը համալրել համապատասխան ամբիոնների վարիչների կողմից առաջադրած թեկնածուներով:
2. Դասաբաշխման ընթացքում առաջնահերթություն տալ 2019-2020 ուսումնական տարվա ընթացքում ՀՊՏՀ պրոֆեսորադասախոսական կազմի հիմնական (մրցույթով և առանց մրցույթի) աշխատողներին:
3. Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝ 2020-2021 ուսումնական տարվա պրոֆեսորադասախոսական կազմի բեռնվածության բաշխումն իրականացնել ըստ սույն որոշման:
4. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Գրիգորյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ա. Գրիգորյան**

2020 թ. օգոստոսի 27
Երևան